ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

01.01.2013թ. – 01.07.2013թ. ընկած ժամանկահատվածում քաղաքապետարանի կատարած աշխատանքները

Դիլիջան համայնքի 2013թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագիրը:
Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

2013թ. երկրորդ եռամսյակում տեղական մուտքերի արդյունավետ հավաքագրման շնորհիվ հավաքագրվել է 138749.7 հազ.դրամի եկամուտ, որը հնարավորություն է տալիս ավելի իրատեսորեն կանխագծելու առաջիկա անելիքները:

Դիլիջան համայնքի բյուջեի եկամուտների կատարողականը
01.07.2013թ. դրությամբ

Եկամտատեսակ	Տարվա ճշտված պլան (հազ.դրամ)	պլանը աճողական տեսքով (հազ.դրամ)	կատարո-ղականը աճողական տեսքով (հազ.դրամ)
ԸՆԴԱՄԵՆԸ	337787.47	161981.40	138749.68
1.1 ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ	47645.10	22758.40	11178.39
1.2 ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ	28788.50	10000.00	9953.32
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	16673.00	8456.00	5773.14
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	4600.00	2100.00	1880.30
2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	174368.60	87116.60	87116.60
3.3 ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	26000.00	13796.00	9679.14
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿ-ԻՑ ԵՎ ԾԱՌԱՅ-ՐԻ ՄԱՏՈՒՑ-ԻՑ ԵԿԱՄ-ՆԵՐ	1787.47	804.40	804.40
3.5 ՎԱՐՁԱԿԱՆ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ	37500.00	16750.00	11682.91
3.6 ՄՈՒՏՔԵՐ ՏՈՒՅԺԵՐԻՑ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻՑ	424.80	200.00	681.50
ԸՆԴԱՄԵՆԸ	337787.47	161981.40	138749.68

Դիլիջան համայնքի բյուջեի ծախսերի կատարողականը 01.07.2013թ. դրությամբ

Ծախսատեսակ / Հիմնարկ	Տարվա պլանը (դրամ)	Անկախ պլանը (դրամ)	Փաստացի ծախսը (դրամ)
ԸՆԴԱՄԵՆԸ՝	676363470.00	500557400.00	233956007.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Աղբահանում)	52056000.00	23615000.00	19536988.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Այլ մշակույթային կազմակերպություններ)	4026000.00	3240000.00	2908965.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Արտադպրոցական դաստիարակություն)	73335000.00	58895000.00	14749381.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ)	6480000.00	3240000.00	1524100.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Բնակարանային շինարարություն)	74000000.00	74000000.00	14093696.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Գյուղական խորհրդատվական ծառայություն)	30000.00	15000.00	0.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Գրադարաններ)	15155800.00	7550000.00	6684988.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Դիլիջանի քաղաքապետարան)	75867400.00	34760000.00	28017595.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընդհ.բնույթի այլ ծառայություններ)	2202270.00	1025400.00	839735.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընդհ.բնույթի հանր.ծառայություններ)	2565000.00	1945000.00	598500.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընտանիքի անդամներ և զավակներ)	2000000.00	1500000.00	1200000.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Թանգարաններ և ցուցասրահներ)	19020000.00	14010000.00	4534066.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Կեղտաջրերի հեռացումՃ	37000000.00	37000000.00	37000000.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ)	255300.00	255300.00	0.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Հանգիստ, մշակույթ և կրոն)	10250000.00	10250000.00	0.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Հրատարակչություններ,խմբագրություններ)	342000.00	180000.00	85497.00

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ճանապարհային տրանսպորտ) (900402057013)	109576000.00	109576000.00	35575085.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Մշակույթի տներ, ակումբներ)	16880000.00	9440000.00	7320381.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Նախադպրոցական կրթություն)	95000000.00	52640000.00	42641740.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Սոցիալական հատուկ արտոնություններ)	1288000.00	908000.00	813000.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Վարչ.բյուջեի պահուստային ֆոնդ)	11862700.00	862700.00	0.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Փողոցների լուսավորում)	42752000.00	31230000.00	15712290.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Քաղաքացիական պաշտպանություն)	120000.00	120000.00	120000.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ)	24300000.00	24300000.00	0.00
ԸՆԴԱՄԵՆԸ՝	676363470.00	500557400.00	233956007.00

Քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում են սոցիալապես անապահով ընտանիքները:

Յուրաքանչյուր նորածին երեխաների համար 33 ընտանիքի տրվել է միանվագ դրամական օգնություն:

Քաղաքային համայնքի ենթակայության նախադպրոցական հիմնարկությունների թվով 178 աշխատողների տրվել է ֆինանսական աջակցություն հերթական բժշկական ստուգումների անցկացման նպատակով:

Դիլիջան քաղաքում գործող <Հույսի Կամուրջ> հասարակական կազմակերպություն հաճախող հաշմանդամ երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու համար համայնքի բյուջեից յուրաքանչյուր ամիս ցուցաբերվում է ֆինանսական աջակցություն:

Համայնքը փոխհատուցել է «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպություն հաճախող թվով 22 երեխաների և նրանց ուղեկցող ծնողների տրանսպորտային ծախսերը:

Կազմակերպվել է հիշատակի արարողություն և ծաղկեպսակներ են դրվել Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան-խաչքարին:Մայիսի 9-ին՝Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 68-րդ և Շուշիի ազատագրման 21-ամյակի կապակցությամբ կազմակերպվեց միջոցառում, հազարավոր դիլիջանցիներ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին զոհվածների հիշատակին:Հայրենական պատերազմի մասնակից վետերաններին տրամադրվեց դրամական օգնություն:

Հունիսի 1-ին Դիլիջան քաղաքում կազմակերպել է երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառում:

Դիլիջան քաղաքից 2013թ. գարնանային զորակոչով ՀՀ Զինված ուժերում ծառայության մեկնող թվով 60 զորակոչիկների տրվել են նվերներ:

Դիլիջանի համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկների ավագ նախադպրոցական խմբեր հաճախող թվով 178 երեխաներ համար ձեռք է բերվել և տրվել նվերներ: Դիլիջան համայնքի մշակույթի տան «Հովք» պարային համույթի համար ձեռք է բերվել հանդերձանք:

Քաունթերփարթ Ինթերնեշնլի "Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության" ծրագրի շրջանակներում «Դիլիջանի թիվ 4 մանկապարեզ» ՀՈԱԿ-ի համար ձեռք է բերվել գույք և կազմակերպել վերապատրաստում մանկավարժական անձնակազմի և ծնողական խմբերի համար՝ ներգրավելով համայնքում գործող ՀԿ-ներին:

Շահումյան,Կալինինի. Մյասնիկյան, Գետափնյա փոզոցներում կատարվել է փողոցների մայթերի հիմնանորոգման, կանաչապատման և գազոնների վերականգնման աշխատանքներ:

Վերակառուցվել են Մյասնիկյան փողոցի քաղաքային շուկայի հատվածից դեպի Մ. Գորկի փողոց տանող ոլորապտույտին հարակից հենապատը, Կալինինի 2-րդ նրբ.թիվ 5 հասցեի տանը հարակից համայնքային նշանակության ճանապարհեզրի հենապատը և Կալինինի 2-րդ նրբ.թիվ 19Բ հասցեի տանը հարակից համայնքային նշանակության ճանապարհեզրի հենապատը:

Իրականացվում են քաղաքի ներհամայնքային նշանակության ճանապարհների ավտրտրանսպորտի երթևեկելի մասի փոսային նորոգման աշխատանքներ ,ինչպես նաև Անդրանիկի թաղամասի որոշ հատվածներում փողոցային լուսավորության ցանցի վերակառուցման աշխատանքներ:

Դիլիջանի քաղաքային զբոսայգին նոր սեզոնին նախապատրաստելու , ինչպես նաև բնակիչների ակտիվ հանգիստը առավել հարմարավետ և անվտանգ դարձնելու նպատակով իրականացվել է զբոսայգու խաղային ատրակցիոնների վերանորոգման աշխատանքներ:

Զգալի աշխատանքներ են իրակնացվել լուսավորության, աղբահանության և սանիտարական մաքրման բարելավման, այն առողջարանային քաղաքին վայել կազմակերպեու ուղղությամբ:Կազմակերպվել և անց է կացվել սանիտարական մաքրման, բարեկարգման և կանաչապատման միամսյակ:

Հունիսի 15-28 –ը Դիլիջանի երկրագիտական թանգարանում անցկացվեց ՖԻԴԵ-ի կանանց «Գրան Պրի» մրցաշարի 2-րդ շրջափուլը:

Հայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ Սմբատ Լպուտյանի նախաձեռնությամբ աշխարհահռչակ շախմատիստ Գատա Կամսկին միաժամանակյա սեանս կաղաց մարզի 45 պատանի շախմատիստների հետ:

Քաղաքապետարանի կողմից անհրաժեշտ ուշադրություն է ցուցաբերվում սպորտի զարգացմանը : Մարզահամալիրի սաները մասնակցել են ըմբշամարտի հանրապետական մրցումներին:

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ